

ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ ժողովրդի նոր շրջանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում նշանակալից դեր կատարած Լազարյանների համալսարանը տոհմը Ռուսաստանում հաստատվեց XVIII դ. կեսերին, երբ սկսվել և շարունակվում էր ռուսահայ, մասնավորապես՝ Հյուսիսկովկասյան, հայ գաղթօջախների ձևավորման և զարգացման պրոցեսը: Թերևս հենց այս շրջանից Լազարյանները սկսում են առնչվել Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի հետ:

Հյուսիսային Կովկասում հաստատված Ղլարի, Մոզդուկի և մյուս հայկական գաղթավայրերը տնտեսական և իրավական տեսակետից որքան էլ կայուն և ինքնուրույն լինեին, կարիք ունեին ազդեցիկ հովանավորների, որպիսիք նրանց համար ավելի քան մեկ դար շարունակ եղել են Լազարյանները: Վերջիններիս կայան այդ գաղթավայրերի հետ դրսևեցվել է հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի տարբեր ոլորտներում: Լազարյանների արխիվում պահվող և ուրիշ վավերագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնելու այդ կապերի մի շարք դրսևորումներ՝ ռուսահայ գաղթավայրերին շնորհված արտոնությունները պահպանելու ուղղությամբ Լազարյանների հետևողական միջամտությունը, նյութական և բարոյական աջակցությունը նորաստեղծ հայ համայնքներին, Լազարյանների ջանքերը լուսավորության տարածման գործում և կուլտուր-մշակութային կյանքում, և, վերջապես, այդ բոլորի արդյունքը հանդիսացող մշտական կապերի ստեղծումը Հյուսիսային Կովկասի և ռուսահայ մյուս գաղթավայրերի միջև:

Հյուսիսային Կովկասի հայկական խոշոր գաղթավայրեր Ղլարի և Մոզդուկի դերը ռուսահայ հասարակական-քաղաքական կյանքում առավել հատկանշական է եղել այն առումով, որ վերջիններս, աշխարհագրական դիրքի և ստվար հայ բնակչության առկայության շնորհիվ, ոչ միայն նկատող օղակ են հանդիսացել Ռուսաստանի և մայր հայրենիքի միջև, այլև գտնվել են քաղաքական անցուղու դերերում: Դրանք էլ մասնակցել դրանց: XVIII դ. երկրորդ կեսից Ղլարը դարձել էր ռուսահայ թեմակալի փոխանորդի նստատեղի, որով ընդգծվում էր գաղութի դերը նաև հոգևոր բնույթի հարցերում: Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացման և իրականացման շրջանում որոշակի տեղ էր հատկացվում նաև Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերին: Նման պարագաներում հասկանալի էր այն համակ ուշադրությունը, որ այդ գաղթավայրերի հանդեպ տածում էին ռուսահայերի վիճակի բարելավումը և Հայաստանի մոտավոր ազատագրումը փոփառող Լազարյանները: Հասարակական-քաղաքական աշխույժ կյանքով ապրող Ղլարի, Մոզդուկի և հայկական մյուս գաղթավայրերը, իրենց հերթին, ուշադրությամբ հետևում էին հայրենիքում կատարվող իրադարձություններին և չերմորեն արձագանքում դրանց: XVIII դ. վերջին կաթողիկոսի թափուր գահի համար ծագած Դավիթ-Դանիելյան վեճը ուներ նաև քաղաքական կարևոր իմաստ, այն միաժամանակ պայքար էր երկու կողմնորոշումների՝ ռուսական և պարսկական: Ռուսահայ գաղթավայրերը, Լազարյանների և ռուսահայ թեմի առաջնորդ եփրեմ արքեպիսկոպոսի գլխավորությամբ, սատար կանգնեցին Դանիել կաթողիկոսին, ցուցաբերելով Ռուսաստանի հանդեպ իրենց անսքող համակրանքը, հայ եկեղեցու միասնությունը պահպանելու և օտար միջամտությունները կանխելու գործում իրենց աննկուն կամքը: Ռուսահայ, այդ թվում՝ Ղլարի, Մոզդուկի և հայ մյուս համայնքները Լազարյաններին և եփրեմ արքեպիսկոպոսին հղած բազմաթիվ գրություններում հայտնում էին, որ ժողովուրդը չի ընդունում Գրիգոր եպիսկոպոսին և նրան ձեռնադրող կաթողիկոսին: Քննադատելով ինքնակոչ եպիսկոպոսի արարքները, հայ համայնքների ներկայացուցիչները խնդրում էին շտապեցնել եփրեմ արքեպիսկոպոսին թարժանացնել կայսեր տեսությանն ու բարեհաճությանը, քանի որ իրենք միայն նրան են ճանաչում ռուսահայ թեմի առաջնորդ¹: Հովակիմ և Մինաս Լա-

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթողիկոսական դիվան, Թղթ. 11, վավ. 133, 134, 36ա, 90բ, 163, 258, 102, 127:

դարյաններից քիչ ջանքեր չպահանջվեցին մերկացնելու Դավթի դրածո Գրիգոր եպիսկոպոսի սաղրանքները, որը Խրանի հովանավորությամբ, հօգուտ Դավթի՝ փորձում էր հասարակական կարծիք ստեղծել ուսահայերի շրջանում, իսկ իր համար ապահովել թեմի առաջնորդի պաշտոնը²։

Հովակիմ Լազարյանը 1801 թ. սեպտեմբերին Աստուխանի, Նոր Նախիջևանի, Ղլլարի, Էնո-րակը Դերբենտում և Մոզդուկի հայերին ուղղած հայտարարության մեջ նշելով Գրիգոր եպիսկոպոսի Մոզդուկում և այլուր կատարած անվայել արարքներն ու խառնակությունները, ավելացնում է, որ լուրջությամբ այս բոլորի նկատմամբ մեր ազգի կործանման կարող է հասցնել։ «Այս բարձրացնելով ճշմարտության ճրագը,— գրում է նա,— այսու համայնական դրութեամբ միանամք ընդ ձեզ լինել մի սիրտ և մի հոգի և որպես դուք ի ձեռն ռազմաստորոգ մահաարի ընտրեալ եք զսրբաղան ծիրեմ արքեպիսկոպոսն լինել կողմանցս Հայկազունեաց հովիվ, որ է ի միջի մերում, և ունի ի ձեռին ըզկոնդական ի ողբոցս հայրապետացն Ղուկասու և Հովսեփա, ահա մեք ևս կամինք մեզ առաջնորդ մշտնջենական և օրինավոր հայրապետ աղգաբնակիչ Դանիել արքեպիսկոպոսին և ոչ բռնութեամբ տաճկաց՝ գանիւ ահացուցմամբ և դրամավատութեամբ ապօրինաւոր օժեցեալն»³։

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի և Լազարյանների միջև անմիջական կապն իրականացվել է հայ համայնքների ներկայացուցիչների՝ Մոսկվա, Պետերբուրգ, Օուսաստանի վաճառաշատ մյուս քաղաքներն ու տոնավաճառները կատարած այցելություններով և այլն։ Ներանցից շատերը, այդ թվում՝ առևտրականներ, հայ իրավարանի դատավորներ, հոգևորականներ, հայ համայնքներից լիազորված ղեպուտատներ, ապաստանում էին Լազարյանների տանը, մոտ հարաբերություններ հաստատում Լազարյան եղբայրների հետ։ Օգտվելով առիթից, իսկ հաճախ էլ ունենալով համայնքի կամ թեմի առաջնորդի երաշխավորությունը կամ միջնորդությունը, նրանք Լազարյաններին էին ներկայացնում իրենց համայնքներին հուզող հարցերի վերաբերյալ մանրամասն խնդրանքներ Լազարյանները, ծանոթանալով հայ համայնքների իրավական և տնտեսական երբեմն ոչ բարձր վիճակին, ձգտում էին միջնորդություններով, բարեխոսություններով, իսկ հաճախ էլ դրամական նվիրատվություններով օգտակար լինել հայրենակիցներին։ Նրանց հասարակական-քաղաքական գործունեությունը պայմանավորված էր տվյալ ժամանակահատվածում Օուսաստանի ռազմատնտեսական քաղաքականությամբ և այն դերով ու մասնակցությամբ, որով հանդես էին գալիս ուսահայ գաղթավայրերն այդ իսկ քաղաքական ու տնտեսական պլանների իրականացման գործում։

Պահպանված վավերագրերի վկայությամբ, Լազարյաններն անպատասխան չեն թողել հայ համայնքների՝ նյութական օգնության բազմաթիվ խնդրանքները։ Ղլլարի հայ քահանան 1798 թ. նամակով Հովսեփ արքեպիսկոպոսին հայտնում էր, որ ռազա Հովհաննեսին (Հովհ. Լազարյանի—Լ. Պ.) ուղարկած գումարով մոտակա գյուղերից այլուր են դնել և բաժանել Դերբենդի և շրջակա հայկական գյուղերից Ղլլարի շրջան գաղթած սովյալ հայերին⁴։ XIX դ. սկզբներից, շրջանների հետևանքով, Ղլլարի շրջանում հաստատված հայ գաղթականների նորատունկ խաղողի այգիները ոչնչանում են։ Զրկվելով ապրուստի հիմնական աղբյուրից, հայերը պատգամավոր են ուղարկում «ի դուռն կայսերական» և միաժամանակ Լազարյաններին խնդրում միջնորդել՝ պետական վարկ ձեռք բերելու և կորուստը վերականգնելու համար։ Վավերագրերից տեղեկանում ենք, որ կառավարող շրջաններում ունեցած կապերի և հայ ղեպուտատների բազմաթիվ հանձնարարական նամակների շնորհիվ Հովհ. Լազարյանին հաջողվել է հասնել նրան, որ անտոկոս և երկարաժամկետ պետական վարկ է հատկացվել հայ համայնքներին⁵։ Բեքեթա (Ղլլարի մոտ) գյուղի հայ հասարակության՝ Լազարյաններին հասցեագրած ավելի ուշ շրջանի նամակներից մեկում, կարգում ենք. «Այդ մասին (շրջանների—Լ. Պ.) հայտնելով, ողորմաժաբար շնորհվեց մեզ 80 հազար ռուբլի հետևողութեամբ Աղային, ձեր պահել ցամա 10, փոխանակ վիսաւացն. և ի պէտս նորոգեաց և նորոգ շինութեանց»⁶։

² Նույն տեղում, թղթ. 11, վավ. 148, տե՛ս նաև՝ թղթ. 11, վավ. 34, 90ա։

³ Մատենադարան, ձեռ. № 2914։

⁴ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 8, վավ. 26։

⁵ Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 102, վավ. 137, 253, 256, 257, 258։

⁶ Центральный государственный исторический архив в Ленинграде (далее—ЦГИА СССР), ф. 880, он. 5, д. 619, л. 22.

Տևողականալով գաղութներում հայկական եկեղեցիների կառուցման հետ կապված ֆինանսական և այլ դժվարությունների մասին, Լազարյանները հնարավորին շահով աջակցել են այդ գործին: Ղլարահայերը 1817 թ. Հովակիմ Լազարյանին ուղղված նամակում գրում են, որ 1807 թ., ժողովելով որոշ գումար, սկսել են որ. Լուսավորիչ քարաշեն եկեղեցու շինարարությունը, ժողով և օրինական և կամ շահին տեղոյտ կուսանաց վանից (Սըմոնի) անուամբ եկեղեցաց ունի նմանություն: Ղլարահայերը միաժամանակ հայտնում էին, որ առայժմ եկեղեցու միայն հիմքն է զգված, քանի որ մեծ ծախսեր են պահանջվում և խնդրում էին դրամական օժանդակություն: Ղլարի հայ հասարակության՝ 1819 թ. Լազարյաններին հասցեագրած նամակներից մեկում շնորհակալություն է հայտնվում սր. Լուսավորիչ եկեղեցու շինության համար ուղարկված 1000 ո. դրամարի համար. նրանք խնդրում էին գործը ավարտին հասցնելու համար 1000 փութ «պոլոսայի երկաթ» ուղարկել Քի ձեռն Ի. Խոջայովի, որը եկեղեցու հոգաբարձուն է և ժամանակին կարող է փոխադրել: Անշուշտ, Լազարյանների բարյացակամությունը և պատրաստակամությունը նկատի ունենի ղլարցիները, երբ մեկ տարի անց, Հովհ. Լազարյանին հղած մի ուրիշ նամակում խնդրում էին դեպուտատների միջոցով ուղարկել հանգույալ կատարին Իվանովնայի խոստացած զեբրկաթեա ծածկոյթ տանեաց տաճարին, հուսալով, որ նա իրենց կօգնի այդ հարցում ևս: Նման խնդրանքներով Լազարյաններին էին դիմում նաև հայկական մյուս գաղթականներից: Այսպես՝ 1829 թ. Հովհ. Լազարյանին են դիմում մոլդովահայերը՝ 1822 թ. սկսած, բայց անավարտ մնացած սր. Աստվածածին եկեղեցու շինության համար գումար ձեռք բերելու խնդրանքով, քանի որ տեղի հասարակությունն անկարող էր ավարտել այդ գործը¹⁰:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին նախորդած և հետագա ժամանակաշրջանում ռուսահայ համայնքների մասնակցությունը քաղաքական անցուղարձերին փաստացի ապացույց էին Ռուսաստանի հանդեպ հայերի տածած հավատարմության և Հայաստանը ազատագրված տեսնելու ակնկալության: Ռազմական գործողությունների ընթացքում Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում բնակվող հայերը տեղեկություններ էին հաղորդում հակառակորդի ուժերի, տեղաշարժերի և պլանների, հարևան երկրների հարաբերությունների մասին: Ռուսական կառավարության համար այս բոլորն անշափ կարևոր էին Իրանի և հարևան երկրների ներքին իրադրության բացահայտման, Ռուսաստանի նկատմամբ նրանց դիրքորոշման և այլ հարցերում¹¹, Պատահական չէ, որ այս շրջանում հետախուզական և այլ տեղեկությունների հավաքման ու ընդհանրացման գործը հանձնարարվել է Խաչատուր Լազարյանին, որը բազմապիսի կապեր ուներ հայրենիքում, Ռուսաստանում, Իրանի և Թուրքիայի տարբեր շրջաններում բնակվող հայրենակիցների հետ: Խաչ. Լազարյանը, 1826 թ. սեպտեմբերի 10-ին Ղլար՝ Գասպար Լոմիձովին և Գուրգեն Արեշովին հասցեագրած նամակներում հայտնում է, որ կայսեր կողմից նոր պաշտոն է ստացել և պարտավոր է մի բարձրատիճան պաշտոնյայի զեկուցել Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Իրանում, Թուրքիայում ու շրջակա գավառներում տեղի ունեցող անցուղարձերի մասին: Գրում է, որ ինքը վաղուց ճանաչում է նրանց, մտերիմ է համարում ու վստահում, ուստի և խնդրում է անհապաղ, բայց և ծածուկ, իրեն պարբերաբար տեղեկություններ հաղորդել Ղլարի և մերձակա գավառների ու Թիֆլիսի անցուղարձերի մասին: Եվ թող իմանա կայսրը, ավելացնում է Խ. Լազարյանը, թե որքան է մեր ազգը հավատարիմ առ զահն արքայական¹²:

Որոշակի հետաքրքրություն ունի Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության այն շրջանը, որը կապվում է հայկական գաղթականների արտոնյալ գոյավիճակի հաստատումը և պահպանումը ապահովող ավելի քան կեսդարյա պայքարի հետ: Այդ շրջանում Լազարյաններն օգտագործելով կառավարող շրջաններում ունեցած իրենց կապերը, հասան Ռուսաստանի հայկական գաղթականների համար էական նշանակություն ունեցող որոշ հարցերի լուծման,

7 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 105, գ. 11, վավ. 86:

8 Նույն տեղում, վավ. 107, 108:

9 Նույն տեղում, վավ. 118:

10 Նույն տեղում, թղթ. 104, գ. 7, վավ. 79:

11 «Հայ-ռուսական համագործակցությունը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում (1826—1828 թթ.)», («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1978, № 2, էջ 16):

12 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 111, 112:

որը նրանց մեծ կշիռ տվեց ռուսահայ կյանքում¹³։ Հայկական գաղթավայրերի ներսում ծագած զժվարությունների, կառավարող շրջանների կողմից առաջին իսկ սահմանափակումների կամ առանձնաշնորհումները վերացնելու փորձերի դեպքում հայ համայնքների ներկայացուցիչներն անմիջապես դիմում էին Լաղարյաններին, ապավինելով վերջիններին միջնորդության ու բարեխոսությանը։ Պահպանվել են Հյուսիսային Կովկասի հայ համայնքների կողմից տարբեր ժամանակներում և զանազան առիթներով Լաղարյաններին ուղղված բազմաթիվ աղերսազրեր, դիմումներ և նամակներ, որոնցում հայերը խնդրում էին օգնել իրենց՝ հետագա տարիներին համար ևս անփոփոխ թողնելու նախկինում շնորհված արտոնությունները։ Ղլլարահայերը XIX դ. սկզբներին Հովակիմ Լաղարյանին ուղղած նամակներից մեկում գրում են, որ Ֆինանսների մի-նիստրը հրամայել է Աստրախանի հայերին թողնել օգտվելու հին իրավունքներից մինչև նոր որոշում կայացնելը, բայց մեք կասկածիմք վասն ապագային ու փութամք միամտությամբ դատենել զի յաստրախանա Մոզդոկա ու մեք (Ղլլարի—Լ. Պ.) ժողովուրդքս թեպ միով պարգևագրովք եմք բայց մեք կրկնապատիկ աշխատութիւն ու ի վաստակս իմք քան զնոսին առաւել մեծ արդիւնաւորութիւն տալով զմեծագոյն հարկս ի գինւոյ ի ցեղոյ ու այլ աշխատութեանց գղտմիք ժողովեցելոց¹⁴։ Այս և այլ փաստազրերից երևում է, որ ինչպես հայ համայնքի ներկայացուցիչները, այնպես էլ վերջիններիս դատը պաշտպանող հայ հոգևոր գործիչներն ու Լաղարյաններն արտոնությունների պահպանման հիմնական կովանը համարում էին տերությունը մեծ եկամուտներ ապահովող հայերի տնտեսական արդյունավետ գործունեությունը։

Հայ համայնքների իրավատնտեսական վիճակի բարելավման հարցերը հոգացել են նաև հայոց կաթողիկոսներն ու ռուսահայ թեմի առաջնորդները, որոնք Լաղարյանների միջնորդությամբ և հովանավորությամբ ոչ մեկ անգամ հասել են հայ համայնքների ներքին կյանքին վերաբերող մի շարք հարցերի դրական լուծմանը։ Հովհաննես և Գրիգոր արքեպիսկոպոսները 1826 թ. օգոստոսի 25-ին Նիկոլայ I-ին հղած խնդրագրում, շեշտելով հայերի արտոնությունների պահպանման տնտեսական շահախնդրությունները, նշում էին, որ իրենք այս գործի լիազոր են կարգում Հովհ. և Խաչ. Լաղարյաններին, որոնք արդեն կես դարից ավելի ջանք ու եռանդ չեն խնայում՝ հօգուտ հայ համայնքների բարեգործություն¹⁵։

Ռուսահայ թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը Ղլլարից 1827 թ. հունիսին Խաչ. Լաղարյանին գրում է, որ ինքը մի քանի ամիս մնալու է Հյուսիսային Կովկասում և հուսով է, որ կօգնի ինչ-որ չափով թեմեացնելու տեղի հայերի վիճակը։ Արքեպիսկոպոսը հայտնում է, որ Ղլլարի հասարակությունը ճանդերձ գյուղական ժողովրդեամբքս նեղվում են տեղական կառավարիչների շահարկություններից։ Այդ մասին, ավելացնում է արքեպիսկոպոսը, նա հանդիպման ժամանակ հայտնել է Կովկասի կուսակալ Գ. էմանուելովին, որը բարեհաճությամբ լսել և խոստացել է օգնել և պաշտպանել հայերին։ Մի քանի ամիս անց, Հովհ. և Խաչ. Լաղարյաններին ուղղված մեկ այլ նամակում Հովհաննես արքեպիսկոպոսը հայտնում է, որ Կովկասի գլխավոր կառավարիչ Ի. Պասկևիչի աջակցությամբ և տեղի կուսակալ Գ. էմանուելովի շնորհիվ հայերն ազատվել են կառավարիչների կաշառակերությունից և այլ բռնություններից¹⁶։

Լաղարյանները սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև հայ համայնքների պատգամավորների միջոցով, պարբերաբար ծանոթանում էին հայկական գաղթավայրերի իրավատնտեսական կյանքի առավել կարևոր մանրամասներին։ Ազգի շահերը զուգակցելով համառուսական և համապետական շահերին, նրանք կառավարող շրջաններին էին ներկայացնում հայկական գաղթավայրերի իրավունքները պահպանելուն ուղղված անվիճելի փաստարկներ։ Լաղարյանների արխիվային ֆոնդերում հանդիպում ենք «Ռուսաստանում բնակվող հայերի մասին» նրանց կազմած բազում գրառումների (դրանց մեծ մասը նախատեսված էր կառավարող շրջաններին ներկայացնելու համար), որոնցում նրանք Հյուսիսային Կովկասի հայերի արտոնությունների պահպանման անհրաժեշտությունը հիմնավորում էին՝ այն համակցելով Ռուսաստանի համընդհանուր շահերին։ Լաղարյանները նշում էին, որ շնորհված արտոնությունների հիման վրա և նրանց սահմաններում հայերը ծավալել են առևտրատնտեսական գործունեություն։ Վերացնել հայերի առևտրական իրավունքները և նրանց ներգրավել առևտրական գիւղիաներում, ավելացնում էին

¹³ Վ. Դիլոյան, Լաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 138։

¹⁴ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 105, գ. 11, վավ. 145։

¹⁵ Նույն տեղում, Լաղարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 60։

¹⁶ Նույն տեղում, թղթ. 103, վավ. 230, 235, 260։

ներանք, կնշանակի սահմանափակել արևելյան երկրների հետ կատարվող և պետությանը եկամուտ բերող հայերի առևտուրը: Նկատի ունենալով Հյուսիսային Կովկասում ստեղծված քաղաքական անապահով իրավիճակը, Լազարյանները շեշտում էին, որ ի տարբերություն ռուսահայ մյուս գաղթավայրերի, Կովկասյան ռազմական գծի վրա գտնվող և անհնազանդ լեռնականներով շրջապատված Ղլյարի, Մոզդուկի և հայկական մյուս գաղթավայրերի բնակչությունը մեծ զորականներ էր կրում հարձակումների, գերեվարության և ավարառության հետևանքով: Առևտրով և երկրագործությամբ զբաղվելու փոխարեն հայերը, փաստորեն, նաև զինվորական ծառայություն էին կատարում, և դրանով իսկ պետությանը աջակցում հարավում լրացուցիչ զորք պահելու անհրաժեշտությունից: Նշելով ևս մի շարք այլ փաստարկներ, Լազարյանները եզրակացնում էին, որ հայերի արտոնությունների պահպանումը կնպաստի, որ նրանց հայրենակիցները, տեսնելով այդ բոլորը, տարբեր վայրերից կտեղափոխվեն Ռուսաստան, ավելի կհարստացնեն և բարգավաճ կդարձնեն ոչ միայն եղած քաղաքներն ու գյուղերը, այլև կհիմնադրեն նորերը¹⁷: Լազարյանների պատվերով և հայ համայնքների ընտրությամբ Պետերբուրգ մեկնող գաղթավայրերի դեպուտատները ոչ միայն հավաստի տվյալներ էին հաղորդում համայնքների իրավունքների և պարտականությունների, հարկատվության, տեղական իշխանությունների օրինազանցությունների մասին, այլև Լազարյանների միջնորդությամբ խնդրագրեր և դիմումներ ներկայացնում համապատասխան պետական մարմիններին: Միաժամանակ, Լազարյանները հայ համայնքներին ուղղված բազմաթիվ նամակներում խորհուրդ էին տալիս գործն առաջ մղելու նպատակով հավատարիմ և բանիմաց դեպուտատներ ուղարկել, որոնք ոչ միայն տիրապետեն ռուսաց լեզվին, այլև տեղյակ լինեն քաղաքական և տնտեսական անցքերին¹⁸: Այդ բոլորն անհրաժեշտ է, գրում էին նրանք, մի քանի բարձր իշխանավորների և մինիստրների դիմադրությունը կոտրելու դժվարին գործի համար, որոնք այն կարծիքին են. թե ժամանակն է երկար տարիներ արտոնություններից օգտվող հայերին իրավունքների հարցում հավասարեցնել մյուս ռուսահպատակներին¹⁹:

Լազարյանների անձնական ծանոթությունները ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների հետ և կառավարող շրջաններում նրանց հեղինակությունը մեծապես նպաստել են հայ համայնքներին վերաբերող և օրակարգում դրված տարբեր հարցերի այս կամ այն չափով լուծմանը: 1840 թ. ապրիլին Կովկասի տեղապահ Մ. Վորոնցովը ռազմական մինիստր, Կովկասյան կոմիտեի նախագահ Ա. Չեռնիշովին ուղղված հայտարարության մեջ նշում էր, որ զվարցիների պատգամավոր Ի. Փառակեցովը խնդրագիր է ներկայացրել, որտեղ նկարագրում է հայերի ծանր վիճակը՝ կապված կուտակված պարտքերի վճարման, հարկատվության և այլ հարցերի հետ: Մ. Վորոնցովը գրում է, որ ինքը հավաստի տվյալներ ունի զվարցիների իրոք ծանր դրության մասին և անձամբ մեկնելու է Ղլյար՝ հարցը տեղում ուսումնասիրելու նպատակով, առավել ևս, որ այդ գործի նախնական քննարկման համար իրեն խնդրել է զվարցիների հավատարմատար և Ղլյար քաղաքի բարեփոխումների ակտիվ մասնակից Լազարևը²⁰:

Հետագա իրադարձությունները հավաստող վավերագրերը վկայում են, որ Լազարյանների անմիջական միջնորդության և հովանավորության շնորհիվ Հյուսիսային Կովկասի հայ համայնքներին հաջողվել է ոչ միայն առժամանակ հետաձգել և պահպանել շնորհված արտոնությունների մի մասը, այլև ձեռք բերել նոր, երկարաժամկետ արտոնություններ՝ հարկատվության, ինքնավարության, առևտրի և այլ բնագավառներում: 1846 թ. սեպտեմբերի 2-ին և 1849 թ. դեկտեմբերի 23-ին հրապարակված բարձրագույն հրամանները, Ղլյարի և Մոզդուկի հայ համայնքների վիճակը բարելավելու նպատակով նախատեսում էին բոլոր տեսակի ընդհանուր պարտքերի վերացում և շնչահարկի փոխարինում ծխահարկով՝ 20 տարի ժամկետով: 1849 թ. հունիսի 14-ի հրամանագրով լրացուցիչ հոգեր են տրամադրվում Սուրբ Նաչի և Կասակո Ցամայի (հետագայում Մոզդուկ) հայ բնակիչներին: Նրանց թույլատրվում է կազմել առանձին համայնք, ունենալ սեփական դատարան և այլն²¹:

XVIII դ. կեսերից Ռուսաստանում ծավալված լուսավորական շարժումը չէր կարող ազդեցություն չգործել Լազարյանների վրա: Ազգապահպանման և ազգային ինքնաճանաչողության հիմնական ազդակը տեսնելով լուսավորության ու կրթական գործի կազմակերպման մեջ, նրանք

¹⁷ ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 386, л. 8 об.

¹⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 14, վավ. 95:

¹⁹ Նույն տեղում, թղթ. 103, վավ. 264, 285:

²⁰ ЦГИА СССР, ф. 1268, оп. 1, д. 763, л. I-Юб.

²¹ Նույն տեղում, ց. 3, գ. 303, թ. 13 հակ., 14, 27, 27 հակ., ց. 4, գ. 391, թ. 1—10 հակ.:

ակտիվ լուսավորական գործունեություն ծավալեցին ուսաՀայ կյանքում: Բազմաթիվ փաստագրերից տեղեկանում ենք, որ Լազարյանները զգալի օժանդակություն են ցույց տվել Ղլարում ու Մոզզոկում հայկական դպրոցների բացմանը և ուսուցչական կադրերով ապահովմանը: Ղրղլարի հեղինակավոր դեմքերից Գ. Լոմիձովը 1826 թ. մարտին դիմում է Խ. Լազարյանին, խընդրելով նախ՝ հետաքրքրվել «յաղագս Մօղղօկու ուսումնարանի կառուցման» և երկրորդ՝ արագացնել Պողոս Ասլանովի գալը, որը պետք է ստանձնի իր պաշտոնը Ղլարի դպրոցում, քանի որ Կազանի համալսարանն արդեն Պ. Ասլանովին ուսուցիչ է հաստատել Ղլարի ուսումնարանում և այդ մասին հրաման է ուղարկել Կովկասի ուսումնարանների դիրեկտորին²²: Պ. Ասլանովը Լազարյան ճեմարանի առաջին շրջանավարտներից էր, որին ղլարահայերի խնդրանքով Լազարյաններն ուղարկել էին Ղլար՝ տեղում դպրոցական գործը կազմակերպելու և հայ մանուկներին ուսուցանելու նպատակով: Ռուսահայ գաղթավայրերում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործի կարևորությունը նկատի ունեն ճովակիմ Լազարյանը, երբ Պ. Ասլանովին հասցեագրած հրաժեշտի նամակում գրում էր. «Քանի որ դու կոչված ես վարժապետություն անել և ուսուցանել Ղլարի քաղաքի մանուկներին, եղիր միշտ արի, համեստ, վաստակասեր և ձեռք բեր պարկեշտ անձի անուն: Միաժամանակ, նա ղլարահայերին պարտավորեցնում էր սիրել և ուշադիր լինել ուսուցչի նկատմամբ, քանի որ Ասլանովը բավական առաջ էր գնացել գիտության ասպարեզում և խիստ պիտանի կլիներ նրանց²³:

Ղլարահայերի հրավերով և Լազարյանների հոգացողությամբ, ճեմարանավարտ Հակոբ Ե. Դավիթ Արզախյան եղբայրները, ստանալով վերադաս մարմինների թույլտվությունը, 1829 թ. Ղլարում մասնավոր պանսիոն են հիմնում: Կովկասյան ուսումնարանների դիրեկտոր Գրուբերը, հիմնավորելով այդպիսի ուսումնարանի բացման անհրաժեշտությունը, գտնում էր, որ այն օգտակար կլինի ոչ միայն Ղլարի, այլև ամբողջ Կովկասյան մարզի համար²⁴: Վավերագրերից նկատում ենք, որ մասնավոր պանսիոն ընդունվողների համար (միայն արական սեռի) վարձ էր նախատեսված, որը ոչ բոլորին էր մատչելի: Դա, թերևս, հետագայում դարձավ պանսիոնի փակման պատճառներից մեկը²⁵: Ինչևէ, Ղլարում պանսիոնի բացման կապակցությամբ կազմված խնդրագրերում և այլ պաշտոնական գրություններում զգացվում է ուսահայ գաղթավայրերում կազմավորված հայ առևտրական բուրժուազիայի՝ լուսավորության և գիտելիքների տարածման նկատմամբ ունեցած միտումը: Ղլարահայերը Կովկասյան մարզի պետ Գ. Էմանուելովին 1828 թ. հունիսի 17-ին ուղղած խնդրագրում նշում են, որ իրենք հրավիրել են Արզախյան եղբայրներին, զգալով և նկատի ունենալով Ռուսաստանի ամուր հովանու տակ բնակվող և տարբեր թղթությունների հետ առևտրական կապեր հաստատած հայերի՝ մի շարք լեզուների իմացության և գիտության նկատմամբ ունեցած ձգտումը²⁶:

Ժամանակի հայ իրականության համար շրջադարձային եղավ Լազարյան ճեմարանի հիմնադրումը, որն աշխարհիկ և լայն մասշտաբի կրթություն էր տալու իր սաներին: Դեռևս XVIII դ. վերջին Լազարյանների ազդեցության տակ կազմված վավերագրերից մեկում նշվում էր, որ ուսումնարանում սովորելու համար Աստրախանից, Նոր Նախիջևանից, Գրիգորիոպոլից, Ղլարից և Մոզզոկից պետք է ընտրվեին 10—17 տարեկան շուրջ 30 աղքատ ժամեկունք ուշիմք և վկայելալք, իսկ էջմիածնից և Կ. Պոլսից պետք է բերվեին այնպիսի աշակերտներ, որոնք արդեն տեղյակ լինելով քերականությանը՝ բարձր դասարաններում ուսանեին ու թարգմանություն ուսանեին²⁷: Լազարյանները, փաստորեն, ոչ միայն ուշադրության են արժանացրել Հյուսիսային Կովկասի հայ համայնքները, այլև ուսումնարանի հիմնարկումից հետո քանիցս նպաստել են հայ մանուկներին ճեմարան ընդունելուն, զբաղվել են վերջիններիս տեղավորման և նյութական ծախսերը հոգալու գործերով: Իրենց հերթին ղլարահայ ամենատարբեր խավի ներկայացուցիչները, լավագույնս գիտակցելով ուսյալ կադրերի անհրաժեշտությունը, աստիճանաբար հրաժարվել են հոգևոր դպրոցների նեղ շրջանակներից և հակվել դեպի աշխարհիկ կրթությունը: Ղլարահայերը 1826 թ. ապրիլին Հովհ. Լազարյանին հղած նամակներից մեկում գրում են, որ Գ. Լոմիձովից

²² Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, վավ. 201:

²³ Նույն տեղում, թղթ. 106, գ. 14, վավ. 21, 31, 73:

²⁴ Государственный архив Ставропольского края (далее—ГАСК), ф. 79, оп. I, д. 604, л. 5.

²⁵ Государственный архив Краснодарского края, ф. 427, оп. II, д. 136, лл. 27, 47.

²⁶ ГАСК, ф. 79, оп. I, д. 604, л. I.

²⁷ Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 202:

լսել են ճամարան ընդունվելու հարցում Լազարյանների բարեհաճ վերաբերմունքի մասին և քաղաքի ուսումնառենչ մանուկներից 4 հոգու ընդունելության համար խնդրում են նրա կարգադրությամբ: Ըստ խնդրագրի՝ երեխաներից երկուսը եկեղեցում պաշտոնավարելու, իսկ երկուսն էլ օջաղաբային պետքերի համար էին²⁸: Հետագայում ևս Ղզլարի, Մոզզոկի և հայ մյուս համայնքների ներկայացուցիչները Լազարյաններին ուղղված բազմաթիվ նամակներում խնդրում էին հայ պատանիներին ընդունել յայաղկերտությամբ բարեհաճ ուսումնարանի ի թիւս ձրիավարձ աղակերտաց և հովանաւորել տիրապէս²⁹: Ղզլարի սբ. Լուսավորիչ եկեղեցու քահանա Գր. Կուլյանը 1843 թ. նոյեմբերին Հովհ. և Խաչ. Լազարյաններին ուղղված նամակում հայտնում էր, որ նրանց հոր՝ Հովակիմ Լազարյանի օրոք, իր կրտսեր եղբայր Մարտիրոսն ավարտել է Լազարյան Էմմարանը և ապա բժշկական կրթություն ստացել: Ապա նա խնդրում է իր որդուն ընդունել ճամարան թի կարգս ձրիավարձ աղակերտաց, քանի որ նա իր տարիքի համեմատ եունի ընկալակալ զմասնավոր մարդումն հասարակ ընթերցւածոց հայերեն և ռուսերեն բարբառոց, յորս և պարապի մշտապես³⁰:

Գրէթէ մեկ դար շարունակ Լազարյան ճամարանը եղել է այն հիմնական կրթօչախներից մեկը, որտեղ կադրեր են պատրաստվել ուսահայ գաղթավայրերում ևս կրթություն և լուսավորություն տարածելու նպատակով: Պահպանված վավերագրերի համաձայն XIX դ. կեսերին ճամարանի ուսանողների մեջ զգալի թիվ են կազմել ուսահայ, այդ թվում և Հյուսիսային Կովկասի հայ համայնքների ներկայացուցիչները: Միայն 1860—1861 ուսումնական տարում Լազարյան ճամարանում ուսանել են 102 հայ աղակերտներ, այդ թվում՝ աստրախանցի, եկատերինոդարցի, զըզլարցի և Անդրկովկասի և Ռուսաստանի այլ քաղաքներից եկած հայ պատանիներ³¹: Զմարանավարտ ուսանողներից շատերը, վերադառնալով հարազատ վայրերը, շարունակել են կապը մոսկովյան հայ ուսանողության և իրենց նախկին դասախոսների հետ: Մշտական շփումների և կենդանի կապերի լավագույն ապացույցն է ճամարանավարտ մի խումր զզլարահայերի (Ա. Սուլթանշահ, Ա. Կանկաճյանց, Ո. Քալանթարյան, Հովհ. Աստվածատրյան) 1886 թ. շնորհավորական նամակը Լազարյան ճամարանի իրենց նախկին ուսուցիչ Մկրտիչ Էմինին: Նրանք դրում են. «Բերկրայի լուրը Ձեր բազմաշխատ կյանքի հորելյանը կատարելու առիթով հասավ և մեզ, Ձեր աղակերտաց մի փոքրիկ խմբակին, որ պանդխտեալ հայրենիքից պատսպարվել է Կովկասի մի անկյունում: Ղզլարահայերը երախտագիտության խոսքեր են հղում Մ. Էմինին՝ մատաղ սերունդի կրթության և դաստիարակության գործում նրա ունեցած մեծ ծառայությունների համար, նշելով, որ նա իր աղակերտություններով և թարգմանություններով նպաստել է ազգային ինքնաճանաչողության, ազգի վերածնության գաղափարին³²:

Ղզլարահայ ուսանողության մի մասը (Ա. Սուլթանշահ, Հ. Քուլուբեկյանց և ուրիշներ) ուսումը ճամարանում ավարտելուց հետո վերադարձել են և մեծ նվիրվածությամբ աշխատել հարազատ քաղաքում: Մյուսները, թեև փոխադրվել էին Ռուսաստանի հայաշատ կամ այլ վայրեր, բայց մշտապես կապված են եղել հայրենի քաղաքի և հայրենակիցների հետ: Լազարյան ճամարանում երկար տարիներ տեսուչի պաշտոն է վարել զզլարցի Գեորգ Քանանյանը, որը նամակագրական կապ է ունեցել Խ. Լազարյանի հետ: Նրանց նամակագրությունից երևում է, թե Խ. Լազարյանն ինչպիսի մեծ ուշադրություն էր նվիրում երիտասարդության դաստիարակության և կրթության հարցերին³³:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում բացված դպրոցների համար ուսումնական ձեռնարկների և գրականության ձեռքբերումը միշտ էլ եղել է կազմակերպիչների հիմնական մտահոգություններից մեկը: Տեղում տպարան չունենալու պատճառով գրականություն է ստացվել նաև Լազարյան ճամարանի տպարանից: XIX դ. առաջին կեսի ռուս հեղինակներից մեկը գրում

²⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 147:

²⁹ Նույն տեղում, թղթ. 103, գ. 9, վավ. 231, թղթ. 107, գ. 44, վավ. 83, թղթ. 111, գ. 36, վավ. 84:

³⁰ Նույն տեղում, թղթ. 107, գ. 44, վավ. 187:

³¹ Նույն տեղում, թղթ. 108, գ. 96, վավ. 39:

³² Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մ. Էմինի արխիվ, ֆ. 50, № 1008—2:

³³ Նույն տեղում, Գեորգ Քանանյանի արխիվ, № 63:

է, որ մոսկովյան տպարանում (նկատի ունի լազարյան ճեմարանի տպարանը—Լ. Պ.) անձամբ տեսել է այն հայերեն գրքերը, որոնք նախատեսված էին Կովկասի հայաբնակ վայրերն ուղարկելու համար³⁴։ Բազմաթիվ վավերագրերից տեղեկանում ենք, որ հայ գաղթավայրերի հոգևոր և աշխարհիկ գործիչներից շատերը մշտական կապեր են ունեցել լազարյան ճեմարանում դասավանդող Մսեր, Զարմայր Մսերյանների և ուրիշների հետ, որոնք հայրենակիցների խնդրանքով իրենց իսկ աշխատասիրած և տպագրած գրականությունը պարբերաբար առաքել են Ղլար, Մոզդուկ, Նկատերինոդար, Ստավրոպոլ և այլ վայրեր՝ «ի պետս հայոց ծխական դպրոցների և հրահանգութեան մանկանց»։ Մսեր Մսերյանը 1853 թ. հոկտեմբերին Ղլար՝ Ստ. քահանա Ֆիլյանցին ուղղած նամակում գրում է, որ ստացել է վաճառված գրքերի գումարը և ուղարկում է «շուրս հատուրս ի նորատիպ ներդրական ճառէ Ս. Խաչին», որից երկուսը խնդրում է նվեր ընդունել³⁵։ Պահպանվել են Ղլարի, Մոզդուկի, Նկատերինոդարի հայոց ծխական հոգևոր դպրոցների հոգաբարձուների նամակները Մսեր մագիստրոսին, որոնցում նրանք խնդրում էին ուղարկել «...Քրիստոսապատում և հավատապատում անվանեալ գրքոյկսն, որ ամենայն տեղ նոյնպէս և մեր վարժատան համար կարի յարմարաւոր են...»։ Նրանք հաճախ էլ հիշեցնելով, որ «դպրոցս բացեալ է յանուն զչափոր հայազն մանկտույն քաղաքիս», խնդրում էին իշեցնել գրքերի գները, որպեսզի դրանք կարողանան ձեռք բերել բոլոր գրավաճառները³⁶։

Այսպիսով, XVIII դ. երկրորդ, ինչպես և անցյալ դարի հատկապես առաջին կեսում, Ռուսաստանի առևտրաարդյունաբերական շրջանների նշանավոր ներկայացուցիչներ լազարյանները մեծ կարողության տեր դառնալով և բարձր դիրքի հասնելով, երբեք չխորթացան և չկտրվեցին հայ իրականությունից։ Նրանք մշտապես կապված մնացին հարազատ ժողովրդի հետ և շանում էին նրան ազատագրել արևելյան բռնատիրությունների լծից, ճիշտ տնօրինել նրա պատմական ձևակապումը, իրենց գործունեությամբ նպաստում էին ռուսահայերի, տվյալ պարագայում՝ Հյուսիսային Կովկասի հայ զանգվածների կուլտուր-լուսավորական կյանքին։ Բարեգործական ծավալուն ձեռնարկումների ընթացքում նրանք, բնականաբար, չէին մոռանում նաև սեփական շահերը։

ЛАЗАРЕВЫ И АРМЯНСКИЕ ПОСЕЛЕНИЯ СЕВЕРНОГО КAVKAZA

ЛЕВОН ПОГОСЯН

Резюме

Обосновавшись в России, Лазаревы сыграли видную роль среди российских, в частности, северокавказских армян. Долгое время они являлись как бы посредниками между русским правительством и представителями армянских колоний Кизляра, Моздока и др. в деле сохранения дарованных им привилегий. Заметны их заслуги и в материальной, и в моральной поддержке северокавказских армян. Более того, имея тесные контакты с представителями северокавказских армянских поселений, они вовлекали их в общественно-политическую жизнь России, в дело освобождения Армении от иноземного ига. Важную роль сыграли Лазаревы и в культурной жизни северокавказских армян, в частности в открытии армянских школ и их содержании, приобщении армян к культуре русского народа.

³⁴ «О разноречьях, покоренных Россиею и добровольно поселившихся в ней народов», Митава, 1838, с. 32.

³⁵ Մատենադարան, Մսերյանների արխիվ, քղթ. 207, վավ. 2059։

³⁶ Նույն տեղում, քղթ. 205, վավ. 1202, 1222, 1241։